Սվարանց

Բնակչությունը՝ 283
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 62 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 40 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Սվարանցը (Սեվարանց, Սվարի, Սուարանց, Սուվարանց) գտնվում է Տաթև գետի վերին հոսանքի շրջանում: Գյուղի մոտ կան երկաթի հանքապաշարներ:
Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» այն գտնվում էր Հաբանդ գավառում:
Գյուղում է գտնվում Սուրբ Հազարափրկիչ եկեղեցին: Այն կառուցվել է 1705 թվականին, սրբատաշ բազալտյա քարերով կառուցված բազիլիկ տաճար է: Գյուղի շրջակայքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան հուշարձաններ՝ Ցորաբերդի ավերակները, մատուռ, խաչքարեր և այլն:
1450 թվականին Տաթեի վանահայր Շմավոն վարդապետը Ամիր Ռոստոմ Օրբելյանից այս և այլ գյուղեր գնել ու նվիրել է Տաթևի վանքին: Ղևոնդ Ալիշանը Սվարանց անունը կապում է Ցուրավանք, Ցրվանք, Ձորովանք, Ցրվունց անունների հետ: Ըստ ավանդության՝ իբր գյուղի բնակիչները. խաբվելով Լենկթեմուրից, անձնատուր են լինում, իսկ նա բոլորին կենդանի թաղել է տալիս: Գյուղի քսահանան, երբ այդ ոճիրի մասին լսում է, ծխամատյանում գյուղի հին անունը ջնջում է և դնում «Սևարանց շեն» նոր անունը, որից հնչյունափոխմամբ առաջանում է Սվարանց անունը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1621 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1563 հա, որից՝
- վարելահող՝ 191 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 42 հա, արոտ՝ 799 հա, այլ հողատեսք՝527 հա
- բնակավայրերի հողեր՝ 52 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա,
- ջրային հողեր՝ 1 հա: